ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-579-02.05.2023-ԱՍ-011/) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-579-02.05.2023-ԱՍ-011/)					
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 2-րդ և 8-րդ հոդվածներ	«Զբաղվածության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ և 8-րդ հոդվածների մասերի համարակալումն անհրաժեշտ է շտկել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ *օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և **մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով**, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով:*	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

2.	***ՀՀ կառավարություն***		Նախագիծը լրացվել է՝ «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ** **«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N ՀՕ-231-Ն օրենքի 22.1-ին հոդվածի 1-ին մասի 13-րդ, 19-րդ և 20-րդ կետերում «զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիր» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «զբաղվածության պետական ծրագրեր» բառերով: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Զբաղվածության մասին» օրենքից հանվում են զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրին վերաբերող դրույթները և կարգավորումները և, հետևաբար, համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանում նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 22 1-ին հոդվածում՝ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրին վերաբերող կարգավորման մասով:	***Ընդունվել է:*** Նախագիծը ներկայացվել է օրենսդրական նախագծերի փաթեթի տեսքով:	**Ընդունվել է:**

3.	***ՀՀ կառավարություն***		Նախագիծը լրացվել է նաև՝ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** 2022 թվականի հունիսի 15-ի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից հանել «զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվող» բառերը: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Զբաղվածության մասին» օրենքից հանվում են զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրին վերաբերող դրույթները և կարգավորումները և, հետևաբար, համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանում նաև Քրեակատարողական օրենսգրքի 140-րդ հողվածում՝ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրին վերաբերող կարգավորման մասով:	**Ընդունվել է:** Նախագիծը ներկայացվել է օրենսդրական նախագծերի փաթեթի տեսքով:	**Ընդունվել է:**